«Գործարարների շահերի պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, սույն օրենքով նախատեսված կազմակերպություններում (այսուհետ՝ Կազմակերպություններ) գործարարների շահերի ներկայացման և պաշտպանության, գործարարների շահերի պաշտպանի (այուհետ՝ Պաշտպան) լիազորությունների և նշանակման կարգի, գործարարների շահերի պաշտպանի գրասենյակի ստեղծման և գործունեության կարգի ու պայմանների, ինչպես նաև գործարարների շահերի պաշտպանության հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքի նպատակը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, Կազմակերպություններում գործարարների շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված արդյունավետ մեխանիզմների և ինստիտուցիոնալ համակարգի ստեղծումն է, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավմանը, ներդրումների խթանման կոռուպցիոն ռիսկերի նվազեցման լրացուցիչ երաշխիքների ամրագրումը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **Գործարար՝** Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձ.

2) **Կազմակերպություններ՝** Հայաստանի Հանրապետության կամ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ կազմակերպություն, որի գործունեությունն անմիջականորեն առնչվում է գործարար ոլորտին կամ այլ կերպ ազդում գործարարների շահերի կամ գործարար միջավայրի վրա.

3) **Գործարարների շահերի պաշտպանի գրասենյակ՝** (այսուհետ՝ Գրասենյակ) ոչ առևտրային կազմակերպություն, որի հիմնական խնդիրը գործարարների շահերի պաշտպանի մասնագիտական գործունեությանն օժանդակելն է.

Գ Լ ՈՒ Խ 2

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ

Հոդված 4. Գործարարների շահերի պաշտպանը

1. Գործարարների շահերի պաշտպանը (այուհետ՝ Պաշտպան) սույն օրենքով սահմանված կարգով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, Կազմակերպություններում գործարարների շահերը ներկայացնող և դրանց պաշտպանությունն իրականացնող անձ է, որի գործունեությունն ուղղված է գործարար միջավայրի բարելավմանը, վարչարարական խոչընդոտների և գործարար ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:
2. Պաշտպանի անկախության և գործունեության երաշխիքները սահմանվում են սույն օրենքով:

Հոդված 5. Պաշտպանի խնդիրները

1. Պաշտպանի գործունեության խնդիրներն են՝

1) գործարարների գործունեության ընթացքում առաջացող խնդիրներին արագ արձագանքու